ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

20 դեկտեմբերի 2024 թվական թիվ 304-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի, 32-րդ հոդվածի 5-րդ մասի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2025 թվականի բյուջեն՝ համաձայն թիվ 1-6 հավելվածների.

1) եկամուտների գծով՝ 2,985,325.0 (երկու միլիարդ ինը հարյուր ութսունհինգ միլիոն երեք հարյուր քսանհինգ հազար) դրամ,

2) ծախսերի գծով՝ 2,985,325.0 (երկու միլիարդ ինը հարյուր ութսունհինգ միլիոն երեք հարյուր քսանհինգ հազար) դրամ:

2.Թույլատրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին.

1) կատարելու բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով սահմանված գումարի 15 % չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,

2) սահմանել, որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբաշխումների գումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար հաստատված ընդհանուր գումարի 15 %-ը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -22	Դեմ – 1	Ձեռնպահ – 0
Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ	Ա. ԴՐՄԵՅԱՆ	
Ս. ՍԻՄՈՆՅԱՆ		
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ		

Մ. ՄԱԹՈՍՅԱՆ
Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ
Մ. ՄՆԱՑՅԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ա. ԻԳԻԹՅԱՆ
Ա. ՄՔՈՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՉԱԼՈՅԱՆ
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Վ. ԹՈՐՈՅԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Թ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

20 դեկտեմբերի 2024 թվական
գյուղ Ախուրյան